ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1947, № 3 Общественные науки

Ար. Մնացականյան

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1917—1921 Թ. Թ.

I

Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մյասնիկյանը (Ա. Ֆ. Մյասնիկով) Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտներից և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ականավոր գործիչներից մեկն էր։ Միաժամանակ Ա. Ֆ. Մյասնիկյանը հանդիսացել է Սովետական պետության զինված ուժերի նշանավոր կազմակերպիչներից և առաջին բոլշևիկ զորավարներից մեկը, որը ինչպես սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար, նույնպես և իմպերիալիստական ինտերվենտական բանակների դեմ մղվող կռիվներում խաղացել է խոշոր դեր։

Այդ նշանավոր մարդու զինվորական-հրամանատարական գործունեությունն ամենից քիչ է լուսաբանված, կամ, կարելի է ասել, գրեթե չի լուսաբանված։ Այստեղ մենք կաշխատենք համառոտակի քննել Մյասնիկյանի հրամանատարական գործունեության մի քանի կարևոր կողմերը, որոնց լուսաբանության համար մեծ հարուստ նյութ են տալիս Թբիլիսիի արխիվները։ Դեռևս Մյասնիկյանի կենդանության ժամանակ Անդրերկոմին կից Պարտարխիվի խնդրանքով Մինսկից և Մոսկվայից ուղարկվել են Մյասնիկյանի գործունեությանը վերաբերող չափազանց կարևոր փաստաթղթեր։ Բացի այդ, Մյասնիկյանի արխիվը պարունակում է 31 հատոր գործեր, որոնք ամփոփում են նրա կյանքի գլխավոր դրվագները։ Այդ և ուրիշ նյութերը ուսումնասիրելով, կարելի է պատկերացում կազմել Ա. Մյասնիկյանի մասին, որպես պարտիական և պետական նշանավոր գործչի, որպես Սովետական զինված ուժերի առաջին կառուցողներից մեկի, որպես զորավարի։

Մյասնիկյանն արդեն տասը տարի գտնվում էր պարտիայի շարքերում, երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը։ Նա կանչվեց զինվորական ծառայության. Մյասնիկյանը նշանակվում է պահեստային 121 գնդում, որը կանգնած էր Դրոգոբիչում։ Մյասնիկյանին տրվում է պրապորշչիկի կոչում։ Առաջին իսկ օրերից նա աչքի է ընկնում որպես պատրաստված, զարգացած, հաստատակամ կազմակերպիչ։ Պրապորշչիկ Մյասնիկյանը նշանակվում է համալրման կրտսեր հրամանատարներ պատրաստող գումարտակի պետ։ Այստեղից էլ սկսվում է նրա զինվորական հարուստ կյանքը։

Մյասնիկյանը ցարական զինվորական իշխանություններից թաքցնում է իր բոլշևիկ լինելը և զորամասում կազմակերպում է ընդհատակյա աշխատանք։ Մյասնիկյանն իր շուրջն է հավաքում ու համախմբում բոլշևիկ զինվորներին, նրանց սովորեցնում և կազմակերպում է ագիտացիա ընդդեմ ցարիզմի և իմպերիալիստական պատերազմի։

Ընկ. ընկ. Ստալինի, Վորոշիլովի, Մոլոտովի և Ժդանովի խմբագրությամբ լույս տեսած «Քաղաքացիական կռիվների պատմությունը» գրքում կարդում ենք.

«Մյասնիկովը բացառիկ թշնամանքով էր վերաբերվում դեպի ռեակցիոն սպայությունը, խորթանում էր սպայության շրջանում, միաժամանակ հմտորեն և զգուշությամբ հավաքագրում էր անհատ ռեոլուցիոներներին։ Նա կուսարտակի զինվորներին—ապագա ունտերսպաներին հավաքում էր իր բնակարանը, աննկատելիորեն, աստիճանաբար նրանց դարձնում էր ցարիզմի դեմ մարտնչողներ»։[1]

Մյասնիկյանը, միաժամանակ, հավասարապես սովորում էր ռազմական գիտությունը։ 1916 թվի դեկտեմբերի 1-ին նա գրեց թեզիսներ՝ «Համեմատական հայացք ռուսական, գերմանական և ավստրիական բանակների դաշտային ծառայության կանոնագրքերի մասին» թեմայի վերաբերյալ։ Այդ աշխատության մեջ Մյասնիկյանը հանդես է բերում հմուտ ռազմագետի՝ իր խորը գիտելիքները և տաղանդը։ Նա պատերազմների պատմության փորձի հիման վրա քննում է ռուսական, գերմանական և ավստրիական զորքերի դաշտային ծառայության կանոնագրքերը, ցույց է տալիս նրանց թերությունները։ Այդ թեզիսների մեջ շարադրված տակտիկական դրույթները հիմնավորելու և զարգացնելու նպատակով, Մյասնիկյանը կազմել է բազմաթիվ սխեմաներ և ռազմական քարտեզներ, որոնց վրա դրանցված են ռազմական օպերացիաների՝ իր վերլուծությունները։[2]

Փետրվարյան ռեոլուցիայի օրերին և նրանից հետո Մյասնիկյանը շարունակում է ակտիվ աշխատանքը բանակի բոլշևիկյան կազմակերպություններում։ Նուստով նա կանգնում է Արևմտյան ռազմաճակատի բոլշևիկյան կազմակերպությունների գլուխը։ 1917 թ. հուլիսի 27-ին Մյասնիկյանը հիմնադրեց „Звезда“ թերթը, որը հսկայական աշխատանք կատարեց Բելոռուսիայի բանվորներին և Արևմտյան ճակատի զինվորներին բոլշևիկյան դրոշի տակ համախմբելու գործում։ Հանդիսանալով „Звезда“-ի խմբագիրը, Մյասնիկյանը թերթի յուրաքանչյուր համարում «Ալ. Մարտունի», «Ալյոշա», «Բոլշևիկ» ստորագրությամբ հոդվածներ էր տպագրում, որոնց մեջ բացահայտում էր ժամանակավոր կառավարության կոնտրռեոլուցիոն բնույթը, բացատրում էր Խերո-ժենշևիկյան համաձայնողական պարտիաների կողմից բանվոր դասակարգին դավաճանելու քաղաքականությունը, բանվորներին և զինվորներին կոչ էր անում՝ կռիվ հայտարարել ռեոլուցիայի թշնամիներին։

Մինսկում Ալ. Մյասնիկյանը Ֆրունզեի հետ միասին հաստատակամ և համառ աշխատանք էր կատարում՝ բանակը բոլշևիզացիայի ենթարկելու և ռեոլուցիոն գվարդիա ստեղծելու համար։ Այդ խնդիրը հնարավոր էր կատարել միայն բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը բանակի զորամասերում ուժեղացնելու և զինվորներին ռեոլուցիոնացնելու միջոցով։ Ահա թե ինչու Մյասնիկյանի ջանքերը գերազանցապես նվիրված էին Արևմտյան ճակատի կազմակերպությունների գործունեությանը և

[1] „История гражданской войны в СССР“, Огиз. Москва, 1943 г. т. II, стр. 138.
[2] Архив Тбилисского филиала ИМЭЛ-а, ф. 31, д. 447, стр. 33.
[3] Նույն տեղում, էջ 34—50։

Մինսկի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքներին, որոնք փաստորեն հանդիսանում էին գինվորական կազմակերպություններ։

1917 թ. օգոստոսին Պետրոգրադում տեղի ունեցավ բոլշևիկների պարտիայի 6-րդ համագումարը։ Ա. Մյասնիկյանը մասնակցում էր համագումարին որպես պատգամավոր՝ վճռական ձայնի իրավունքով, Մինսկից և Արևմտյան ռազմաճակատի կազմակերպություններից։ Հենց առաջին նիստում, օգոստոսի 8-ին, երբ քննարկվում էր համագումարի օրակարգը, Մյասնիկյանը ելույթ է ունենում և առաջ է քաշում բանակի գրության հետ կապված հարցերը, որոնք պետք է քններ համագումարը և լուծում տար։

«... Մեր պարտիան Արևմտյան ճակատում քիչ է աշխատում,— ասում է Մյասնիկյանը,— ես գտնում եմ, որ համագումարը պետք է զբաղվի այդ հարցով։ Մեզանում չափազանց լավատես հայացքներ գոյություն ունեն բանակի նկատմամբ։ Մեր բանակը պարտիականության տեսակետից անկայուն է»։

Համագումարն ընդունում է ընկ. Մյասնիկյանի առաջարկությունը և լսում է զեկուցումներ տեղերից։ Օրակարգը քննարկելիս, լսում է նաև բանակի կազմակերպությունների ներկայացուցիչների ելույթները և զբաղվում է բանակի հարցերով։ Մյասնիկյանը համագումարի 5-րդ նիստում (օգոստոսի 10-ին) հանդես եկավ առանձին զեկուցումով։ Նրա զեկուցումը մի հաշվետվություն էր պարտիայի 6-րդ համագումարին, այն աշխատանքի մասին, որ կատարում էին Մինսկի և Արևմտյան ռազմաճակատի բոլշևիկները Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի դյուրն նախապատրաստելու ուղղությամբ։ Միաժամանակ զեկուցման մեջ համարձակ քննադատվում են պարտիական աշխատանքի թերությունները բանակում և առաջ են քաշվում իրադրությունից բխող կարևոր խնդիրներ։ Մյասնիկյանի զեկուցումը գծում է բանակի պարտիական կազմակերպությունների ուժեղացման, բանակը ռևոլուցիոն ելույթի նախապատրաստելու կարևոր պայմանները։

Համագումարի մի նիստում քննվում էր ընթացիկ մոմենտի և պատերազմի հարցը։ Դավաճան Բուխարինը հանդես գալով, իր հայացքներով՝ հակադրվում է «սոցիալիստական ռևոլուցիայի լենինյան-ստալինյան պլանին։ Բուխարինը և նրա կողմնակիցները ջախջախիչ հարված ստացան ընկեր Ստալինի կողմից։ Համագումարում հանդես գալով, ընկ. Մյասնիկյանը պաշտպանում է ստալինյան թեզերը և հերքում է Բուխարինի հայացքները, որոնք նրա դավաճանական գծից էին բխում։ Հատկապես պատերազմի և բանակի հարցի մասին Մյասնիկյանը վճռականապես դեմ արտահայտվեց Բուխարինի բանաձևին, որով «ժխտվում էր Ռուսաստանի դերն ու նշանակությունը որպես մարտական միավորում, որպես ինքնուրույն պետական ուժ՝ միջազգային պետությունների սիստեմում»։ Համագումարն ընդունում է Մյասնիկյանի առաջարկությունը և բանաձևի այդ կետի նրա խմբագրումը։

Պարտիայի 6-րդ համագումարում Ա. Մյասնիկյանի հաստատակամ և

---

[1] «Протоколы VI съезда РСДРП (б). Партиздат. М. 1934 г. стр. 11.

[2] Նույն տեղում, էջ 66—67։

[3] Նույն տեղում, էջ 190։

ակտիվ դերի մասին հետևյալն է պատմում ընկեր Ա. Օրջոնիկիձեն 1925 թ. իր մի ելույթում.

«... Հիշում եմ Ալյոշային մեր պարտիայի 6-րդ համագումարում. Պետրոգրադում մեր կազմակերպության հուլիսյան ավերից հետո, երբ նա զեկուցումով հանդես եկավ Արևմտյան ռազմաճակատում եղած տրամադրությունների և մեր կազմակերպության վիճակի մասին։ Որքան ինքնավստահությամբ և որպիսի հավատով էր տոգորված նրա զեկուցումը մեր հաղթանակի նկատմամբ...»

Համագումարում Ա. Մյասնիկյանը հանդիպումներ է ունենում Ի. Վ. Ստալինի, Յա. Մ. Սվերդլովի, Վ. Մ. Մոլոտովի հետ, կարևոր ցուցումներ է ստանում նրանցից¹ Արևմտյան ճակատում պարտիական կազմակերպությունների աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու ուղղությամբ։ Համագումարում Մյասնիկյանը հանդիպումներ է ունենում Կովկասից եկած դելեգատների հետ, մանրամասն հետաքրքրվում է Կովկասի վիճակով, ողջույնի նամակ է ուղարկում Բաքվում հայերեն լեզվով հրատարակվող բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթի խմբագրությանը։ Այդ նամակում Մյասնիկյանը գրել է.

«... Արդեն մի քանի տարի է, որ միանգամայն կտրված եմ կովկասյան կյանքից։ Այս րոպեիս գտնվում եմ Պետերբուրգում՝ մեր պարտիայի համագումարին եմ մասնակցում, և այստեղ ընկերներից իմացա, որ մենք Կովկասում ունենք մեր թերթը՝ հայ բանվորների համար։ Այն ժամանակ, երբ ռեակցիան և նրա կամա թե ակամա աջակիցները,—մենշևիկները („оборонцы"), էսէրները բուռն հարձակում են անում պրոլետարիատի կուսակցության՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի, այլ խոսքով՝ մեծամասնականների վրա, «Սոցիալ-դեմոկրատ»-ի հրատարակությունը հայ կյանքում շատ ուրախալի և քաղաքական հույժ կարևոր մի գործ է։ Անհրաժեշտ է հայ բանվորին դաստիարակել սոցիալիստորեն, բառի հարազատ իմաստով, որ նա չվարակվի օպորտունիստների ու սոցիալ-պատրիոտների կործանարար թույնով... Հեղափոխությունն իր երրորդ, վճռական էտապն է անցնում։ Պետք է որ բանվորությունն այժմ ավելի քան դգաստ, կազմակերպ և դդույշ լինի...»²

Պարտիայի 6-րդ համագումարից հետո Մյասնիկյանը վերադառնում է Մինսկ և անցնում Արևմտյան ռազմաճակատի բոլշևիկյան կազմակերպությունների գլուխը։ Նա 1917 թ. սեպտեմբերին անց է կացնում բոլշևիկների մարզային կոնֆերանս, որին մասնակցում էին 61 դելեգատ բանակից և 27 դելեգատ Մինսկի մարզից։ Կոնֆերանսում Մյասնիկյանը զեկուցում է տալիս ընթացիկ մոմենտի մասին և վճռականորեն խնդիր է դնում մարտական ջոկատներ ստեղծելու, նրանց զինելու և ամբողջ իշխանությունը սովետների ձեռքը հանձնելու մասին։ Արևմտյան ճակատի զորքի կայազորները ամենուրեք անցնում էին բոլշևիկների կողմը։ Այդ բանը կատաղության հասցրեց Արևմտյան ճակատի շտաբի պետ գեներալ Վիրուբովին և ճակատի հրամանատար գեներալ Բալուևին։ Կերենսու հրամանով ձերբակալվեց Մյասնիկյանի խմբագրությամբ հրատարակվող «Զվեզդա» թեր֊

---

¹ Архив Тбилисского филиала ИМЭЛ-а, ф. 31, д. 421, стр. 62.

² «Սոցիալ-դեմոկրատ» թերթ, № 15, Բաքու, 1917 թ. 10. VIII.

Սեպտեմբերի 16-ից նրա փոխարեն սկսեց հրատարակվել «Մոլոտ» թերթը, որը նույնպես արգելվեց հոկտեմբերի 6-ից։ Մյասնիկյանը երկու օր հետո կազմակերպվեց նոր թերթի հրատարակությունը։ Այդ թերթը կոչվում էր „Буревестник"։ Այդ թերթի առաջին համարում տպվեցին Վ. Ի. Լենինի «Ճգնաժամը հասունացել է», «Բանկերի ազգայնացումը» և ուրիշ հոդվածներ, որոնց մեջ ռևոլուցիայի մեծ առաջնորդը կոչ էր անում կազմակերպել սոցիալիստական ռևոլուցիայի գրոհը։

Այդ օրերին Ա. Մյասնիկյանը գիշեր ու ցերեկ եռուն աշխատանքի մեջ էր և կազմակերպում ու գինում էր գվարդիական ջոկատներին։ 1917 թ. հոկտեմբերի 3-ին Մինսկում գումարվեց Արևմտյան ճակատի և բելոռուսական պարտիական կազմակերպությունների երկրորդ կոնֆերանսը, ուր խոշոր դեր էր խաղում Մյասնիկյանը։ Ընկ. Մյասնիկյանը բաց անելով կոնֆերանսը, առաջարկում է ողջույնի հեռագիր ուղարկել ռևոլուցիայի առաջնորդ Վ. Ի. Լենինին։ Կոնֆերանսից հետո Արևմտյան ճակատի բոլշևիկները՝ Մյասնիկյանի գլխավորությամբ լարված աշխատում էին և նախապատրաստվում գինված ապստամբության։

Հոկտեմբերի 22-ին Մինսկում տոնվեց Պետրոգրադի Սովետի ստեղծման 12-րդ տարեդարձը։ 1905 թվի Պետրոգրադի Սովետի մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Ա. Մյասնիկյանը, որը կոչ էր անում ռևոլուցիոն զինվորներին ու բանվորներին՝ գինված ապստամբություն բարձրացնել և բուրժուազիայի ձեռքից խլել իշխանությունը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի պատմական օրերին Լենինը և Ստալինը գտնվում էին Պետրոգրադում՝ Մեծ ռևոլուցիայի շտաբում։ Նրանք իրենց մարտական զինակիցներին ու հավատարիմ աշակերտներին դասավորել էին երկրի կարևոր կենտրոններում՝ ռևոլուցիոն գրոհը կազմակերպելու համար։ Ալեքսանդր Մյասնիկյանը հանդիսանում էր Լենինի և Ստալինի պարտիայի այն նշանավոր գործիչը, որը առաջնակարգ դեր խաղաց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հերոսամարտերի Լենինյան-Ստալինյան ծրագիրը Արևմտյան ռազմաճակատում, Բելոռուսիայում իրականացնելու գործում։[1]

2

Սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակով Ռուսաստանում ստեղծվեց աշխարհում առաջին Սովետական պետությունը։ Սովետական իշխանությունը ռևոլուցիայի հաջորդ օրը դիմեց բոլոր պետություններին՝ պատերազմը դադարեցնելու և հաշտություն կնքելու առաջարկով։ Իմպերիալիստները կատաղի չարությամբ ընդունեցին Լենինի դեկրետը՝ հաշտություն առաջարկելու մասին։ Ռուսական սպիտակգվարդիական գեներալները չճանաչելով Սովետական կառավարությունը, ե դեռևս գտնվելով բանակի ղեկավար պոստերում, շարունակում էին պատերազմական ավանտյուրան։ Ամերիկյան և անգլո-ֆրանսական իմպերիալիստները չճանաչելով Սովետական իշխանությունը, բանակցություններ էին վարում հին

[1] Այդ մասին ավելի մանրամասն տես „История гражданской войны в СССР" т. 2, стр. 166, ինչպես և Բելոռուսիայի Կոմունիստական (բ) պարտիայի Կենտկոմի քարտուղար ընկ. Գորբունովի գիրքը՝ „Советская Белоруссия". изд. ОГИЗ, Москва 1944 г. стр. 8—9.

բանակի Գերագույն Գլխավոր հրամանատարի պաշտոնակատար գեներալ Դուխոնինի հետ՝ պատերազմը շարունակելու մասին։ Դուխոնինը կտրականապես հրաժարվեց կատարել Լենինի և Ստալինի կարգադրությունը զինադադարի մասին։ 1917 թ. նոյեմբերի 22-ին Լենինը և Ստալինը Գերագույն գլխավոր հրամանատարի պոստից հեռացրեցին կոնտրռևոլյուցիոն գեներալ Դուխոնինին և նրա փոխարեն նշանակեցին նոր գլխավոր հրամանատար։ Այսպիսով սկսվեց ցարական հին բանակի արձակումը և Սովետական զինված ուժերի կազմակերպումը։ Ամբողջ բանակում սկսվեց հրամանատարական կազմի փոփոխումը և բանակի դեմոկրատիզացիան։ Սպիտակ գեներալները և սպաները հեռացվում էին ղեկավար պոստերից. նրանց փոխարեն ռևոլյուցիոն զինվորները՝ դեմոկրատական հիմունքներով ընտրում էին նոր հրամանատարներ։ 1917 թ. նոյեմբերի 23–24-ին տեղի ունեցավ Արևմտյան ռազմաճակատի զինվորների երկրորդ համագումարը, որին մասնակցում էին ընկեր Ս. Օրջոնիկիձեն՝ որպես Կենտկոմի ներկայացուցիչ, ընկեր Վոլոդարսկին՝ որպես Կենտգործկոմի ներկայացուցիչ և ընկեր Ա. Մյասնիկյանը որպես Բելոռուսիայի Օբկոմի նախագահ։ Համագումարը վերջնականապես հայտարարեց ռազմաճակատի հին հրամանատարությունը և ընտրեց նոր հրամանատարություն։ Գլխավոր հրամանատարի միակ թեկնածուն պրապորշչիկ Ա. Մյասնիկյանն էր, նա, որ պատերազմի սկզբից մինչև այդ օրերը Արևմտյան ճակատի զինվորների մեջ էր, նրանց դիրքերում, նրանց կազմակերպիչն ու բոլշևիկյան դրոշի տակ համախմբողը։ Ա. Մյասնիկյանին Արևմտյան ճակատի գլխավոր հրամանատար ընտրելու մասին Ս. Օրջոնիկիձեն 1925 թ. մարտին հետևյալն է պատմում.

«...Ինչպես այսօր հիշում եմ, 1917 թ. նոյեմբերին Արևմտյան ճակատի զինվորական պատգամավորների Սովետի երկրորդ նիստը։ Ամբողջ համագումարը ոտքի կանգնած դիմավորեց իրեն կողմից հենց նոր ընտրված ճակատի ռևոլյուցիոն հրամանատարին։ Այնուհետև ամբիոն է բարձրանում մեր սիրելի Ալյոշան—մոխրագույն հին շինելով։ Ամբողջ դահլիճը խանդավառությամբ ողջունում է նրան։ Դա նոր հրամանատարն է, նա, որին ծնել է Հոկտեմբերյան ռևոլյուցիան. դա նա է, որը փոխարինում է հին, ոսկեգույն ուսադիրներով գեներալներին։ Համագումարը բուռն կերպով ծափահարում է իր հարազատ եղբորը, հրամանատար Ալյոշային, որը պետք է ղեկավարի բանակը»։[1]

Արևմտյան ռազմաճակատի հրամանատար ընտրվելով, սկսվում է Ա. Մյասնիկյանի կյանքի նոր շրջանը։ 1917 թ. նոյեմբերի 25-ին Մյասնիկյանը ստորագրեց և հրապարակեց հրաման «Ռևոլյուցիոն զինվորների կամքով ճակատի գլխավոր հրամանատարությունը ստանձնելու մասին»։

Հանդիսանալով Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատարը, Մյասնիկյանը միաժամանակ գլխավորում էր Բելոռուսիայի Օբկոմը, Մինսկի Սովետը, Բելոռուսիայի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի Կենտկոմը։ Մյասնիկյանը հսկայական մասշտաբներով ու ռևոլյուցիոն մեծ ավյունով պարտիական, պետական և զինվորական գործունեություն ծավալեց Բելոռուսիայում սովետական կարգեր հաստատելու և ամ-

[1] Архив Тбилисского филиала ИМЭЛ-а. ф. 31, д. 424, л. 62.

բապնդելու ուղղությամբ։ Չշեղվելով մեր նպատակադրումից, այստեղ մենք կխոսենք Մյասնիկյանի միայն հրամանատարական գործունեության մասին։

1917 թ. նոյեմբերի 27-ին Մյասնիկյանը հրաման է հրատարակում բանակի դեմոկրատականացման մասին։ Այդ հրամանով նա ցրում է Արևմտյան ռազմաճակատի հին շտաբը և Մինսկի կայազորի շտաբը, կազմակերպում է նոր շտաբ։ Մյասնիկյանը սահմանում է, որ բոլոր հրամանատարներն ընտրվում են զինվորների պատգամավորների ժողովներում, միայն ռևոլուցիոներներից։ Վերացված է համարվում հին բանակի զգեստի ձևը, ուսադիրները, նշում է նոր զգեստի, աշխատավարձի չափի իր նախագծերը, որոնք ներկայացված են Ժողկոմսովետին և սպասում է այդ հարցերի լուծմանը։ Հին բանակը զորացրվում է։ Մյասնիկյանը մեծ ջանքեր է թափում՝ հին բանակի ռևոլուցիոն լավագույն մասին զենքի տակ պահելու և Սովետական պետությունը պաշտպանելու համար։ Նրա հրամանը կոչ է անում շինել հագած բանվորներին ու գյուղացիներին՝ մնալ մարտական պոստերում, կռվել բուրժուազիայի դեմ, հավատարիմ լինել ռևոլուցիոն պարտքին։

Նոյեմբերի վերջերին գլխավոր հրամանատար Մյասնիկյանի անունով ստացվում էին Մինսկի կավառի բազմաթիվ գյուղացիների գանգատները։ Այդ փաստաթղթերի մեջ գյուղացիները հաղորդում են այն մասին, որ Բելոռուսիայում գտնվող լեհական կորպուսի զորքերը նեղություն են տալիս ժողովրդին։ Լսելով Ժողկոմսովետի դեկրետը հողի մասին, լեհ զինվորները խմբերով ինքնակոչ կերպով հարձակվում էին գյուղացիների վրա, խլում էին հացը, անասունները, անասնակերը։ Լեհական կորպուսի տեղավորված շրջաններում առաջ էր եկել կատարյալ անարխիա։ Ա. Մյասնիկյանը ժամանելով կորպուսի զորակայանները, հաստատակամ և վճռական գործողություններով լիկվիդացնում է անկարգությունները և հաստատում ռևոլուցիոն կարգ ու կանոն։ Նոյեմբերի 29-ի իր հրամանում Մյասնիկյանն անշեղորեն կենսագործում է լենինյան դեկրետը։ Այդ հրամանում գրված էր. 1) լեհական զորքն իրավունք չունի միջամտելու Ռուսաստանի ներքին գործերին. 2) լեհական զինվորները համարվում են Լեհաստանի քաղաքացիներ և չպետք է մասնակցեն Ռուսաստանի ներքին գործերին. 3) գյուղացիական կոմիտեներին հրամայվում է՝ ամբողջ հողը հանգիստ կերպով վերցնել «հողային կոմիտեների» ձեռքը։ Հիշեցվում է այդ կոմիտեներին, որ «բոլոր հողերը, կենդանի և անշունչ ինվենտարը, որ խլվում է հարուստներից, շենքերը, մթերքները, հացի պաշարը—հանդիսանում են համաժողովրդական սեփականություն։ Հողի մասնավոր սեփականությունը վերացվում է։ Ձեռք առեք բոլոր միջոցները, ժողովրդին պատկանող հողը և գույքը չվառելու, չփչացնելու, այլ պաշտպանելու համար»[1]

Կալվածատերերին և խոշոր բուրժուազիային սեփականազրկելը տեղի էր ունենում կատաղի պայքարի միջոցով։ Բուրժուազիայի և կալվածատերերի շահերն էին պաշտպանում հին բանակի սպիտակգվարդիական գեներալներն ու մյուս կոնտրռևոլուցիոն ուժերը։ Բոլշևիկների աշխատանքը դժվարացնելու նպատակով թշնամիները գիժում էին ամեն տեսակի դավա-

[1] Архив Тбилисского филиала ИМЭЛ-а, ф. 31, д. 442, стр. 34.

գրությունների և պրովոկացիաների։ Նոյեմբերի 28-ին և 29-ին Մինսկում երևացին սպիտակգվարդիական բանդաներ, որոնք մի քանի ցիստերն սպիրա էին հափշտակել և քարշ տվել կայարանն ու քաղաքը։ Այդ բանդաները սպիրտը ձրի բաժանելով զինվորներին, նրանց հարբեցնում էին, կաշառում և գուրս բերում ռևոլուցիայի դեմ։ Նոյեմբերի 30-ին Ա. Մյասնիկյանը ձեռք է տոնում կտրուկ միջոցներ՝ Մինսկ թափանցած այդ կոնտրռևոլուցիոն բանդաները լիկվիդացնելու համար։ Նա Մինսկի շրջանում հայտարարում է ռազմական գրություն և խստորեն կիրառում է պատերազմի ժամանակվա օրենքները։ Մյասնիկյանը համատեղության կարգով նշանակվում է նաև Մինսկի կայազորի պետ։ Մյասնիկյանի հրամանը վերջանում է հետևյալ խոսքերով.

«Մինսկի ռևոլուցիոն հավատարիմ կայազորին կոչ եմ անում աչալուրջ և զգաստ պաշտպանել այն քաղաքի շահերը, որտեղ այժմ կոփվում է ամբողջ ռազմաճակատի ռևոլուցիոն գործը, որտեղ որպես ամբողջ մարզի կենտրոնի՝ եռում է ռևոլուցիոն աշխատանքը։»[1]

Մինչև 1917 թ. դեկտեմբերի 12-ը Մյասնիկյանը հսկայական աշխատանք կատարեց՝ Բելոռուսիայում Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի գեկրետները կիրառելու, Արևմտյան ռազմաճակատում կարմիր գվարդիական բանակներ կազմակերպելու և ռևոլուցիայի ներքին ու արտաքին թշնամիների հարձակումները ետ մղելու գործում։ Մյասնիկյանը կատարում է Լենինի-Ստալինի առաջադրանքները, երկաթյա բռունցքով ջախջախում է ազնվական-կալվածատիրական դասակարգի և բելոռուսական բուրժուական նացիոնալիստների կատաղի դիմադրությունը։ 1917 թ. հոկտեմբերի վերջերից մինչև նոյեմբերի վերջերը սոցիալիստական ռևոլուցիան հաղթականորեն տարածվում է Բելոռուսիայում և այնտեղ հաստատվում է Սովետական իշխանություն։ Լենինի և Ստալինի ցուցումներով 1917 թ. վերջերին Մինսկում ստեղծվեց Արևմտյան մարզերի Ժողկոմսովետ, որի գլուխ կանգնած էր Արևմտյան ճակատի Գլխավոր հրամանատար Ա. Մյասնիկյանը։

3.

1917 թ. դեկտեմբերի 12-ին հրաման ստացվեց, որով Արևմտյան ճակատի գլխավոր հրամանատար Ա. Մյասնիկյանը շտապ կանչվում էր Գլխավոր շտաբ։ Նույն օրը Մյասնիկյանը մի շարք կարևոր կարգադրություններ արեց իր շտաբին. իր մեկնելու կապակցությամբ։ Նա № 6 հրամանով Գլխավոր հրամանատարի և Մինսկի կայազորի պետի պարտականությունները կատարող է նշանակում և նորից հիշեցնում է իրեն ենթակա զորքերին ռևոլուցիոն պարտականությունների կատարման մասին։[2] Դեկտեմբերի 12-ին Մյասնիկյանը մեկնում է Գերագույն Գլխավոր հրամանատարության շտաբը։

Դա մի ծանր ժամանակամիջոց էր՝ նոր ստեղծված Սովետական իշխանության համար։ Անգլո-ֆրանսական իմպերիալիստները 1917 թ. դեկտեմբերի 10-ին գաղտնի համաձայնագիր էին կնքել, որով Ռուսաստանը բաժանել էին իրար մեջ՝ ազդեցության շրջանների։ Ըստ այդ համաձայ-

[1] Архив Тбилисского филиала ИМЭЛ-а, ф. 31, д. 442. էջ 86.
[2] Նույն տեղը, էջ 47.

նության, Անգլիային ընկնում էին Կովկասը, Կուրանը, Դոնը, իսկ Ֆրանսիային՝ Ուկրաինան, Բեսարաբիան, Ղրիմը։ Մյուս կողմից էլ կայսերական Գերմանիան և իր դաշնակիցները՝ Թուրքիան, Ավստրո-Հունգարիան շարունակում էին իրենց գիշատիչ զավթողական պատերազմը Սովետական իշխանության դեմ, նպատակ ունենալով տապալել Սովետական պետությունը և զավթել մեր երկիրը։ Սովետական իշխանությունն անհավասար ուժերով մարտ էր մղում իմպերիալիստական պետությունների դեմ։ Հարկավոր էր արագ կերպով զինադադար կնքել, ժամանակ շահել ուժեր կուտակելու, բանակ ստեղծելու, Սովետական պետությունն ամրապնդելու համար։ Այդ գործի դեմ նենգ կերպով պայքարում էին դավաճան Տրոցկին, Բուխարինը և նրանց գործակիցները։

Ժամանելով Գերագույն Գլխավոր հրամանատարության շտաբը, Ա. Մյասնիկյանը Ժողկոմսովետին զեկուցում է Արևմտյան ճակատում ստեղծված իրադրության և հատկապես զինված ուժերի վիճակի մասին։ Այդ օրերին կառավարությունը ժամանակավորապես Մյասնիկյանի վրա է դնում Գերագույն Գլխավոր հրամանատարի պարտականությունները։ Ստանձնելով Սովետական բոլոր զորքերի Գերագույն Գլխավոր հրամանատարությունը, Մյասնիկյանն իրեն հատուկ եռանդով ե մեծ թափով սկսում է մոբիլիզացնել ռևոլուցիոն զորքերը՝ Սովետական իշխանության թշնամիների դեմ կռվելու և մեր երկիրն ինտերվենցիայից պաշտպանելու համար։

Դեկտեմբերի 19-ին Ա. Մյասնիկյանը հրապարակեց մի հրաման՝ ուղղած Հարավ-Արևմտյան և Ռումինական ճակատների ռևոլուցիոն զինվորներին։ Այդ հրամանը հանդիսանում է քաղաքացիական պատերազմների նշանավոր փաստաթղթերից մեկը։

Օտարերկրյա ինտերվենտները և սպիտակ գեներալները դիմում էին ամեն տեսակի նենգ միջոցների սովետական զինված ուժերը քայքայելու և Սովետական իշխանությունը տապալելու համար։ Բանակը հիմնովին չէր վերակազմվել և հեշտությամբ ենթարկվում էր Սովետական իշխանության թշնամիների պրովոկացիաներին։ Ուկրաինայում կենտրոնացել էին կոնտրռևոլուցիայի մեծ ուժեր։ Ուկրաինական բուրժուական Ռադայի ղեկավար Պետլյուրան մտածել էր մի խորամանկ և պրովոկացիոն պլան – Սովետական պետության զինված ուժերը քայքայելու համար։ Նա իր անունից հրատարակել էր մի հրաման՝ ուղղված զորքին, որով բոլոր ռուս զինվորներին հրամարում էր զորացրված և առաջարկում էր թողնել ճակատն ու մեկնել իրենց տները։

Այդ պրովոկացիոն քաղաքականության դեմ ուղղված հրամանում Մյասնիկյանը կոնկրետ օրինակներով վերլուծում է Հարավում և Արևմտյան ճակատում ստեղծված իրադրությունը, ցույց է տալիս Սովետական իշխանության դեմ կազմակերպվող կոնտրռևոլուցիայի նպատակները և առաջ է քաշում մեր զորքի խնդիրները։

«Ուկրաինական Ռադան հասկանում է, որ ռևոլուցիայի հենարան է ծառայում բանակը, ուստի ձգտում է քայքայել բանակի ամբողջությունը և հզորությունը։ Չբավարարվելով իր կողմից մինչև այժմ կիրառվող քայքայիչ միջոցներով, ուկրաինական բուրժուազիան այժմ գործի է դնում մեր բանակը կազմալուծելու նոր միջոցներ։

Կիևյան Ռադայի գործակալներից մեկը՝ պարոն Պետլյուրան հրաման է հրատարակել՝ երեք ամսով զորացրել բոլոր ռուս զինվորներին։ Ընկերներ, դա կաշառում է և այն էլ ամենաստոր կաշառումը։ Պետլյուրան ուզում է ազատվել ռևոլյուցիոն զինվորներից. նա քայքայում է նրանց շարքերը, նա մտադիր է՝ հենվելով դեռևս իր հետևից գնացող ուկրաինացի զինվորների որոշ մասի վրա, վերջնականապես կործանել ռևոլյուցիան Ուկրաինայում... Ընկերներ, ես խնդրում եմ ձեզ չենթարկվել Պետլյուրայի պրովոկացիային. Նա բացի վնասից, ռևոլյուցիային և ձեզ, բացի վնասից՝ բանակին, ոչինչ չի կարող տալ։ Եթե ձեզ համար թանկ է մեր ապագան և մեր սերունդների բարեկեցությունը, մի ընդունեք Պետլյուրայի առաջարկը ձեզ տուն զորացրելու մասին, կանգնեցեք մարտական պոստերում . . . Ընկերներ, ռևոլյուցիայի անունից, Ժողովրդական Կոմիսարների Սովետի անունից ես պահանջում եմ ձեզնից՝ ազդեք ձեր ընկերների վրա, որոնք չեն հասկանում, թույլ կամք ունեն, որպեսզի նրանք զոհ չգնան Պետլյուրայի հրամանին։ Դուք որպես ազատագրված. երկրի գիտակից զավակներ, պարտավոր եք և պետք է պահպանենք կարգը ճակատում, մեր բանակի անխորտակելիությունը, քանի որ մեր առջև դեռևս կան մարտեր՝ ընդդեմ բուրժուազիայի։ Կորչի շահագործող դասակարգերի իշխանությունը։ Կորչեն բուրժուազիայի գործակալները և նրանց պրովոկացիաները։ Կեցցե մեր կազմակերպված բանակը, կեցցե ռևոլյուցիան։

Կարդալ բոլոր զորամասերում, շտապ տարածել առանձին թերթիկներով, կախել աչքի ընկնող տեղերում, հատկապես երկաթուղային կայարաններում։ Հաղորդեցեք հեռագրով։

Գերագույն Գլխավոր հրամանատարի
ժամանակավոր պաշտոնակատար՝
Ա. Մյասնիկով»[1]

Մյասնիկյանը կառավարության կողմից ստանալով լայն լիազորություններ, համարձակ կերպով և հմտորեն վերակազմում էր բանակի ապարատները, արձակում և ոչնչացնում էր ցարական բանակի շտաբները, զինվորական հիմնարկներում արմատացնում էր՝ նորը, սովետականը։ Այդ տեսակետից հետաքրքիր է Մյասնիկյանի հրամանը զինվորական դատարանների մասին։ Գործող բանակին ուղղված մի հրամանի մեջ Մյասնիկյանը գրում է. «Ժողովրդական Կոմիսարների Սովետի կողմից բանակի և նավատորմի դատարանների մասին հրատարակած դեկրետի հիման վրա, հրամայում եմ ի կատար ածել հետևյալը»։ Այնուհետև գալիս է հրամանը, կազմված 6 բաժիններից։ Առաջին բաժնում ցրված են հայտարարվում հին[2] բանակի ռազմա-ծովային բոլոր դատարանները, նրանց փոխարեն ստեղծվում են — գնդային, դիվիզիոնային և էսկադրոնային դատարաններ, իսկ բանակներում և նավատորմիղներում՝ ռևոլյուցիոն տրիբունալներ։ Այդ դատարանները ձևավորվում են դեմոկրատական ընտրությունների ճանապարհով։

1 Կովկասյան Օկրուգի շտաբի Ռազմա-պատմ. արխիվ (Թիֆլիս), ֆ. 0, գ. 18, էջ 1—2։
2 Архив Тбил. филиала ИМЭЛ-а, ф. 31, д. 442, стр. 71—73.

հրամանի առաջին բաժնի մյուս պարագրաֆներում ժանրաժասն սահմանվում են դատարանների և տրիբունալների իրավունքները։

Երկրորդ բաժնում վերակառուցվում է քննչական-դատախազական ամբողջ սիստեմը։ Նշանակվում է քննչական հանձնաժողովների ընտրականություն և կազմակերպվում է բանակի դատախազական ինստիտուտը, հաստատվում են նրա իրավունքները բանտարկությունների և խուզարկությունների կարգը բանակում։ Երրորդ բաժինը նվիրված է դատավարության կարգի, պաշտպանների ինստիտուտի ստեղծմանը, կասացիոն դանգատներին։ Մյուս բաժինները սահմանում են բանակում հանցանքների բնույթը, դատավարության նյութերի ձևակերպման կարգը և այլ խնդիրները։ Հրամանի վերջում հիշատակվում են, որ այդ հրամանով սահմանվում է միայն դատավարության հիմունքները, որը չի սպառում բոլոր հարցերը։ Հրամանի տակ ստորագրված է՝

«Գերագույն Գլխավոր հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Մյասնիկով»։

Հրամանին կից ծանոթություններում նշվում է, որ «վերեում սահմանված բոլոր հոդվածների կիրառումը հաշվել 1917 թ. հոկտեմբերի 25-ից սկսած»։

Մյասնիկյանի բացակայության ժամանակ Մինսկում նորից դլուխ էր բարձրացրել կոնտռևոլուցիան։ Հին գեներալներն ու սպաները կազմակերպել էին զինված բանդաներ, որոնք չէին ենթարկվում Սովետների իշխանության օրդաններին, հարձակվում էին պետական հիմնարկների վրա, գրագվում էին թսպանով և սպանություններով։ Ռազմաճակատում ես թրշնամին տենդորեն շարունակում էր իր քայքայիչ գործը զինված ուժերը կազմալուծելու ուղղությամբ։ Ներքին կոնտրռևոլուցիային ուղղություն էր տալիս և դլխավորում այսպես կոչված՝ «Բելոռուսական Ռազմանե», որը ձևավորվել էր դեռ 1917 թ. օդոստոսի 5-ին և գործում էր գերմանական հրամանատարության հետ միասին, կայսերական գլխավոր շտաբի առաջադրանքներով։ Այդ Ռազմն կազմված էր ցարական կոնտրռևոլուցիոն գեներալներից և բելոռուսական բուրժուական նացիոնալիստներից։ Ռազմայի գործունեությունն ավելի ակտիվ և կատաղի բնույթ ստացավ, երբ Բելոռուսիայում հաստատվեցին Սովետական կարգեր։ 1917 թ. դեկտեմբերին, երբ Ա. Մյասնիկյանը Արևմտյան ճակատից ե Մինսկից մեկնել էր Գերագույն Գլխավոր հրամանատարության շտաբը, Բելոռուսիայում ավելի ակտիվացան կոնտրռևոլուցիոն ուժերը և ստեղծվել էր սպառնական դրություն։ 1917 թ. դեկտեմբերի վերջերին կոնտրռևոլուցիոներներն անցան բացահայտ ելույթի։ Մինսկում դեկտեմբերի 31-ին և հունվարի 1-ին տեղի ունեցան խռովություններ, որոնց կազմակերպողները բելոռուսական Ռազմայի անդամներն էին։ Նրանք նույնիսկ հրատարակել էին կոնտրռևոլուցիոն կլակատներ՝ ուղղված Սովետական իշխանության դեմ ե դրանք փակցրել տների պատերին։ Բուրժուական Ռազմայի բանդաներն ուզում էին Սովետները տապալել և դրավել իշխանությունը։

Ահա այդ օրերին էլ Գարտիայի կենտկոմը և ԺՈզկոմսովետը Ա. Մյասնիկյանին նորից վերագարձնում են Արևմտյան ճակատը։ Վերագառնալով Արևմտյան ճակատի հրամանատարի և Բելոռուսիայի Ռևկոմի նախագահի

իր մեծ աշխատանքին, Ա. Մյասնիկյանը կազմակերպում է ռևոլուցիոն զինվորներին, կարմիր գվարդիական ջոկատներին և ետ է մղում կոնտրռևոլուցիոներների հարձակումները, լիկվիդացնում է սպիտակ-գվարդիականների խռովությունները։

4

1918 թ. հունվար-փետրվար-մարտ ամիսները Ա. Մյասնիկյանի հերոսական մեծ կյանքի ամենավայլուն օրերից են։ Հունվարի 3-ին Մյասնիկյանը Մինսկում նորից վերականգնում է ռազմական գրությունը, որը վերացրել էին նրա բացակայության ժամանակ։ Նա այցելում է զորամասերը, գումարտակները, կայազորները, ելույթներ է ունենում զինվորների ժողովներում, նրանց ոգեշնչում և կոչ է անում պաշտպանել սոցիալիստական ռևոլուցիայի շահերը։

Ինչպես հայտնի է, 1918 թ. հունվարի 15(28)-ին Լենինն ստորագրեց դեկրետ՝ Կարմիր Բանակի կազմակերպման մասին։ Դրանից երեք օր հետո, հունվարի 18-ին, գերմանական զորքերն անցան հարձակման դեպի Բելոռուսիայի խորքը, դեպի Մերձ-Բալթիկա և Պետրոգրադ։ Ժողկոմսովետը դիմեց ժողովրդին «Սոցիալիստական Հայրենիքը վտանգի մեջ է» կոչով։ Գերմանական գիշատիչ իմպերիալիզմի բանակների դեմ մղվող դաժան մարտերի մեջ պետք էր մի կողմից՝ շարունակել հին բանակի անձնակազմի զորացրումը, մյուս կողմից՝ կամավորական սկզբունքներով կազմակերպել Կարմիր Բանակը։ Այդ բարդ իրադրության մեջ Լենինի և Ստալինի առաջադրանքները փայլուն կերպով կատարում էր Արևմտյան ճակատի գլխավոր հրամանատար Ա. Մյասնիկյանը։

Հունվարի 29-ին Ա. Մյասնիկյանը հրաման հրատարակեց՝ ուղղված Արևմտյան և Հարավ-արևմտյան ճակատների բանակներին։ Այդ հրամանում սահմանվում է հին բանակի զորացրման և նոր, կամավոր Կարմիր Բանակի ստեղծման կարգը։

Փետրվարի սկզբներին գերմանական իմպերիալիստները գավթեցին Բելոռուսիայի խոշոր մասը և մոտենում էին Մինսկին։ Փետրվարի 18—22-ին գերմանացիները գավթեցին Մինսկը, Պոլոցկը, Օրշան, Դվինսկը։

Ա. Մյասնիկյանը կազմակերպում է Արևմտյան ֆրոնտի զինված ուժերի համառ դիմադրությունը գերմանացիներին և սովետական հիմնարկություններն ու զինվորական շտաբները էվակուացիայի է ենթարկում դեպի Արևելք։ Մինսկը թշնամու կողմից գավթելուց հետո, Արևմտյան ճակատի հրամանատարությունը և Արևմտյան մարզերի Ժողկոմսովետը փոխադրվեցին Սմոլենսկ։ Այստեղ Ա. Մյասնիկյանը հսկայական քաղաքական-կազմակերպչական աշխատանք է ծավալում գերմանացիների հարձակումը կանգնեցնելու համար։ 1918 թ. փետրվարի 23-ին Ա. Մյասնիկյանը ճակատի զորքերը վերակազմեց առանձին ջոկատների՝ Վիտեբսկի, Օրշայի, Մոգիլևի ուղղություններում, նշանակեց այդ ջոկատների հրամանատարներ՝ նրանց առաջ դնելով կոնկրետ մարտական խնդիրներ։ Այդ հրամանի լրիվ տեքստն առաջին անգամ հրապարակված է 1940 թվականին։[2]

[1] Архив Тбилисского филиала ИМЭЛ-а, ф. 31, д 442, ст. 53.

[2] „Документы по истории гражданской войны в СССР", т. 1, стр. 120, Москва, 1940 г.

Նույն օրը Մյասնիկյանը հրատարակեց մի ուրիշ հրաման, որը 1918 թ. փետրվարի 23-ին տպագրվեց առանձին թերթիկով և նրանից հետո չի հրատարակվել։ Այդ հրամանում ասված է.

«Միջազգային և ազգային բուրժուազիայի աջակցությամբ գերմանական իմպերիալիզմի սկսած արշավանքը՝ Ռուսաստանի Սոցիալիստական պետության առաջ մեծ և փառապանծ խնդիր է դրել. պաշտպանել ռուսական բանվորների և գյուղացիների երկիրը . . . Բարեկամներ և ընկերներ, մահացու սպառնալիքն է շարժվում մեր իդեալների վրա . . . Ռուսաստանի Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղաշրջմանն սպառնում է գերմանական թալանչիների, լեհական կալվածատերերի և ռուսական բուրժուազիայի բռունցքը . . . Բոլորը, ում համար թանկ է ազատ մարդկային կյանքը, ով խուսափում է շահագործումից, ճնշումից և սարսափելի ստորացումից, բոլոր գիտակից և խելացի աշխատավորներ, դուք բոլորդ կանչվում եք Կարմիր Դրոշի տակ՝ պայքարելու միջազգային թալանի դեմ, պայքարելու ազատության, ազատ աշխատանքի, ազատ կյանքի, Սովետական իշխանության երկրի և սոցիալիզմի թշնամիների դեմ . . . Հանուն այդ արդար պայքարի՝ մենք կելնենք պաշտպանելու ռևոլյուցիոն Ռուսաստանի արևմտյան սահմանները՝ Վիտեբսկից մինչև Գոմել . . . Թող օգնի մեզ մեր գիտակից հզորությունը։ Կեցցե աշխատավոր Ռուսիայի միասնությունն ու ինքնապաշտպանությունը։

Արևմտյան ճակատի Գլխավոր հրամանատար՝

Ա. Մյասնիկով»[1]

Նոր ձևավորված կամավորական բանակի զորքերը 1918 թ. փետրվարի 23-ին Պսկովի և Նարվայի մոտ ջախջախիչ հարվածներ հասցրին գերմանական բանակին։ Ա. Մյասնիկյանը ղեկավարելով Արևմտյան ճակատի մեջ մտնող զորքերի մարտական գործողությունները, միաժամանակ լարված աշխատանք էր կատարում՝ Կարմիր Բանակի զորամասերը համալրելու և ամրապնդելու ուղղությամբ։

«Մեզ հարկավոր են ուժեղ ոգով, ամուր կամքով և պողպատյա կարգապահությամբ ձուլված պարտիզաններ—գրում է Մյասնիկյանը 1918 թ. փետրվարի 23-ին։—Հին բանակը քայքայվեց. նա այլևս գոյություն չունի։ Թշնամիների հարվածների տակ ամրապնդվում և ավելանում է մեր նոր բանակը, որն առանց ռևոլյուցիոն դիսցիպլինայի չպետք է գործի և չի կարող ապրել։ Մեզ մոտ են գալիս կամավորներ, որոնք ուզում են ազատ շնչել և պաշտպանել իրենց և իրենց հարազատներին ու իրենց ունեցվածքը։ Հաջող կարելի է պաշտպանել միայն այն ժամանակ, երբ կունենանք միասնական, ընդհանուր կամք և դրան համապատասխան գործողությունների միասնություն։ Միասնությունը մարտում՝ հաղթանակի բարձրագույն օրենքն է. այն պահանջում է անառարկելիություն և կատարողականություն... Այդպես են մեզ թելադրում ռևոլյուցիան և մեր սոցիալիստական ձգտումը։ Այդ-

[1] Տե՛ս «Приказ главнокомандующего Западного фронта», № 2, 23. II. 1918 г. Смоленск. Հրամանի մի օրինակը գտնվում է Մյասնիկյանի արխիվում, Թբիլիսիում։

պիսի դիսցիպլինան պահանջում է ամեն մի պարտիզանից ամենաարագ կերպով, ճշգրիտ և անպայման կատարել իր ռևոլուցիոն պետի բոլոր մարտական կարգագրությունները։ Ով չի կարող լինել այդպիսի կամավոր, նա չպետք է գա մեր շարքերը... Փոքրոգիներն ու անգործնականները թող չգան մեր շարքերը,—մենք կգնանք առանց նրանց... Բավական են պրոլետարիատի և գյուղական չքավորության գիտակից կադրերը, որոնք հասկանում են, որ այժմ պայքարը գնում է նրանց գոյության համար, նրանց ընտանիքների և ազատ կյանքի համար...[1]

Փետրվարին գերմանացիներին հասցրած հարվածներով Կարմիր Բանակը փոխեց ռազմաճակատում ստեղծված իրադրությունը հօգուտ Սովետների։ Սովետական իշխանությունը Բրեստի հաշտությամբ ձեռք բերեց «դադար»։ Այդ ժամանակաշրջանում Ա. Մյասնիկյանը ծավալուն աշխատանք է կատարել Կարմիր Բանակի զորամասերի կազմակերպման ուղղությամբ։ 1918 թ. մարտի 11-ին նա մեկնում է Մոսկվա, ուր զեկուցում է Արևմտյան ճակատի զորամասերի կազմակերպման ու ամրապնդման ընթացքի մասին։ Մարտի 20-ին Մյասնիկյանը նորից վերադառնում է Սմոլենսկ և ձեռնամուխ է լինում զինված ուժերի կազմակերպման մեծ գործին։ Մարտի վերջերին և ապրիլին հրատարակած Դ.Ն 101, 102, 103, 104, 105, 106, 230 հրամաններում Մյասնիկյանը վերակազմում է պարտիզանական կարմիրգվարդիական ջոկատները և նրանցից ձևավորում է կանոնավոր դիվիզիաներ ու բանակներ, հաստատում է շտաբները, նշանակում է հրամանատարներ, մատնանշում է զինվորական ծառայության կանոնադրքերի մի շարք կարևոր սկզբունքներ։[2]

Չեխոսլովակյան կորպուսի զորքերը միանալով սպիտակգվարդիական կոնտրռևոլուցիոն ուժերին, 1918 թվի գարնանից խռովություն բարձրացրին Սովետական իշխանության դեմ։ Խռովարար չեխերին առատորեն կաշառում էին և լավ զինում անգլիական, ֆրանսիական և ճապոնական իմպերիալիստները։ 1918 թ. մարտի 7-ից մինչև մայիսի վերջը Ֆրանսիան չեխերին տրամադրել է 11 միլիոն ռ., Անգլիան՝ 3 և կես միլիոն։ Անտանտան չեխ զինվորների համար սահմանեց ամսական 200 ռ. աշխատավարձ, իսկ սպաներին՝ մի քանի անգամ ավելի։ Չեխական խռովարարները բռնել էին Արևելյան երկաթուղին՝ մինչև Վլադիվոստոկ. նրանց մի խումբը կանգնած էր Պենզա-Սիզրան գծում, մյուսը՝ Զելյաբինսկի շրջանում, մի խումբ գավթել էր Սիմբիրսքը, Օմսկը և Իրկուտսկը, իսկ մեծացածներն էլ՝ Վլադիվոստոկը։ Չեխական ռազմաճակատն ահավոր սպառնալիքի նման կախվել էր երիտասարդ Սովետական իշխանության վրա, որը նոր էր միայն կնքել Բրեստի ծանր հաշտությունը և աշխատում էր ժամանակն օգտագործել՝ իր զինված ուժերը կազմակերպելու համար։

Ո՞ւմ նշանակել չեխական ճակատի գլխավոր հրամանատար, ո՞վ կարող է հմտորեն միավորել նոր ստեղծված կարմիր զորամասերի և ժողովրդական պարտիզանների ուժերը, ստեղծել կարգապահություն, ջախջախել

[1] Архив Мясникяна А. Ф. (Тбилиси, ИМЭЛ), д. № 23, л. 58—59.
[2] Архив Мясникяна, д. № 20 и 21.

Անտանտի գործակալներին, որոնք սպառնում էին Սովետական իշխանության գոյությանը։

Լենինը և Ստալինը այդպիսի թեկնածու նշեցին Ալեքսանդր Մյասնիկյանին, որն Արևմտյան ճակատում գերմանական զավթիչների դեմ մղվող դաժան կռիվներում արդեն իրեն ցույց էր տվել որպես բոլշևիկ հրամանատարի և մեծ կազմակերպչի։ Առանց ազատելու Արևմտյան ճակատի գլխավոր հրամանատարի պարտականություններից, Մյասնիկյանին Ժողկոմսովետը նշանակեց նաև Չեխական ճակատի գլխավոր հրամանատար։ Ժողկոմսովետի կողմից 1918 թ. մայիսի մեկին տրված № 1622 վկայականում կարդում ենք.

«Սույնը ներկայացնողը հանդիսանում է Արևմտյան և Չեխոսլովակյան ֆրոնտների գլխավոր հրամանատար ընկեր Ալեքսանդր Թեոդորովիչ Մյասնիկովը, որին Սովետական բոլոր օրգանների կողմից պետք է ցույց տրվի լիակատար աջակցություն՝ նրա կարգադրություններում, մարտական գործողությունների նախապատրաստման և անցկացման գործում»։[1]

Մյասնիկյանը մեկնեց Չեխական ճակատ։ Այնտեղ նա սովետական հիմնարկներում ու զորակայաններում տեսավ կատարյալ խառնաշփոթություն և անիշխանություն, որն ստեղծել էին դավաճան Տրոցկու դրած մարդիկ։ Մյասնիկյանն սկսեց կարմիր բանակի զորամասերի շտաբները կարգի բերելուց և կանոնավոր զորամասեր ստեղծելուց, որոնք պետք է զինաթափ անեին չեխերին։

Ընկեր Ստալինը տեղեկություն ստանալով Վլադիվոստոկում ճապոնացիների կողմից դեսանտ հանելու մասին, դեռ ապրիլին հատուկ ծածկագրով կարգադրություն էր ուղարկել տեղական կազմակերպություններին, չեխերին մինչև ապստամբվելը զինաթափ անելու և նրանց հնարավոր խռովությունը կանխելու համար։ Տրոցկին ամեն միջոց գործ էր դնում այդ ցուցումի կատարումը ձգձգելու համար։ Եվ երբ չեխերն ապստամբեցին, տեղական կազմակերպություններն այլևս անկարող գտնվեցին նրանց ուժն արագ կոտրել։ Չեխերի դեմ մղվող կռվի ամենաթեժ օրերը մայիսի վերջերն էին։ Մյասնիկյանը կազմակերպում էր վճռական հարված Անտանտի այդ գործակալներին։ «Չեխերի դեմ մղվող ամենաթեժ կռվի ժամանակ, մայիսի 30-ին, Չեխական ֆրոնտի գլխավոր հրամանատար նշանակված ընկեր Ա. Թ. Մյասնիկովը կանչվում է Տրոցկու կողմից իբր թե տեղում ստեղծված դրության մասին զեկուցելու։ Տրոցկին նրան պահում է 5 օր՝ Երբ Մյասնիկովը վերադարձավ ճակատ, չեխերն արդեն հասել էին Սամարայի մոտ, այսինքն՝ դավթել էին Միջին Վոլգան»։[2]

Պենզան չեխերի կողմից գավթելուց հետո նահանգական գործկոմի նախագահ Վ. Վ. Կուբաևը և իրեն ենթակա սովետական, զինվորական հիմնարկները փոխադրվել էին Ռուզաևկա։ Կուբաևը մտադիր էր անմիջապես մեկնել Ռուզաևկայից։ Մայիսի 31-ին Վ. Ի. Լենինն ուղիղ գծով Կուբաևին հաղորդել է հետևյալը։

«Մինչև Մյասնիկովի ժամանումը և բոլոր գործերի հանձնումը

[1] Архив Тбил. филиала ИМЭЛ-а, ф. 31., д. 443., ст. 3.

[2] Академик МИНЦ. «История СССР», лекции, прочитанные в ВПШ при ЦК ВКП (б), Москва 1946 г. стр. 185.

նրան, դնալն աննպարին է և անթույլատրելի։ Ժամի քանիսին եք ստացել վերջին տեղեկությունները Գենգայից և ուռնից։ Այնտեղ քանի՞ հազար չեխեր կան և նրանք երբ են մեկնել Սամարա։ Երբ Մյասնիկովը կժամանի, նրան ուղարկեք ապարատի մոտ՝ ինձ հետ խոսելու համար։ Ի՞նչ երաշխիք կա էքսպեդիցիայի[1] մասին՝ տեղեկությունների ճշտության վերաբերյալ։ Լենին»։[2]

Մյասնիկյանը վերադառնում է ճակատ՝ իրականացնելու չեխոսլովակների խռովության լիկվիդացնելու խնդիրը, որը նրա առաջ դրել էին Լենինն ու Ստալինը։ 1918 թ. հունիսի 4-ին Մյասնիկյանը հրաման է հրատարակում ճակատում ստեղծված դրության մասին, որի մեջ նա դիմում է կոմիսարներին ու դինվորական ներկայացուցիչներին՝ սովդեպների հետ միասին «հաստատել խիստ հսկողություն և ձեռք առնել ամենավճռական միջոցառումները» ճակատի մերձակա շրջաններում կարգ ու կանոն հաստատելու, երկաթուղիները, փոստը, հեռագրագիծը, կամուրջները պաշտպանելու։ «Բրենց ռեոլուցիոն պարտքը կատարելուց խուսափողներին կամ սաբոտաժի ենթարկողներին անմիջապես հանձնել ռազմահեղափոխական դատարանին, իսկ չարագործներին, որոնք կնկատվեն ուղիները, կամուրջները փչացնելու մեջ, հեռագրական կապը փչացնելու և Սովետական Ռեսպուբլիկայի դեմ նման այլ հանցանքներ կատարելու մեջ, դնդակահարել հանցանքի տեղում։ Նման ամեն մի դեպքի մասին անմիջապես զեկուցել ինձ»։[3]

Հունիսի 5-ին Մյասնիկյանը ժամանելով Սիզրան, ծանոթանում է այնտեղի իրադրությանը և կոչ է հրատարակում ուղղված Մերձ-Վոլգյան նահանգների բնակչությանը, որի մեջ բացատրում է չեխերի խռովության կոնտրռևոլուցիոն բնույթը և կոչ է անում աշխատավորներին՝ օգնել Կարմիր Բանակի զորամասերին՝ լիկվիդացնելու չեխերի խռովությունը։ Հունիսի 7-ին Մյասնիկյանն աշխատանքից հեռացնում և պատժում է Տրոցկու գործակալներից Գոպովին և ուրիշներին, որոնք կազմալուծիչ գործունեություն էին ծավալում զորամասերում և սովետական հիմնարկներում։[4]

Չեխերի առաջշարժումը շարունակվում էր։ Նրանք գավթեցին Սամարան։ Մյասնիկյանը հունիսի 8-ին մեկնեց Սիմբիրսկ, կազմակերպելու Սամարայի ազատագրումը։ Մյասնիկյանն առանձնացնում է հատուկ զորամասեր, նրանց գինում և հունիսի 9-ին ուղարկում է չեխերի դեմ կռվի ամենից վտանգավոր հատվածը։ Հունիսի 11-ին Մյասնիկյանը կոչով դիմում է սովետական զորքերին, նա հմայիչ փաստերով վերլուծում է չեխերի ապստամբության շրջանում Անտանտի դրած գեներալների կիրառած կոնտրռևոլուցիոն քաղաքականությունը, նրան հակադրում է Սովետական իշխանության 7 ամսվա գոյության ընթացքում կատարած մեծ գործերը ժողովրդի շահերի օգտին, կոչ է անում բոլոր դինվորներին՝ «մինչև արյան վերջին կաթիլը մարտնչել թշնամիների դեմ և պաշտպանել Սոցիալիստական ռևոլուցիայի նվաճումները»։[5]

---

[1] Խոսքը վերաբերում է հապճեպական դեսանային։
[2] „Ленинский сборник", том. 18. стр. 200.
[3] „Документы по истории гражданской войны в СССР", том 1, стр. 364.
[4] Архив Тбил. фил. ИМЭЛ-а, ф. 11, д. 21.
[5] Նույն տեղում, էջ 10—11։

Դավաճան Տրոցկին չէր հանդուրժում Ա. Մյասնիկյանին։ Նա ամեն տեսակի դավեր էր նյութում և ստոր միջոցներ էր գործ դնում՝ Մյասնիկյանին չեխական ֆրոնտի հրամանատարությունից հեռացնելու համար։ Եվ նրան այդ հաջողվեց։ 1918 թ. հունիսի կեսերին Մյասնիկյանը ետ է կանչվում։ Նրա փոխարեն Տրոցկին Չեխոսլովակյան ճակատի գլխավոր հրամանատար է նշանակում իր գործակալ «ձախ» էսեր Մուրավյովին, որը շուտով ավանտյուրիստական ելույթ ունեցավ Սովետական իշխանության դեմ, որի համար և գնդակահարվեց։

1918 թ. հունիսի 25-ին Ա. Մյասնիկյանը ընդարձակ զեկուցագիր է ներկայացնում Վ. Ի. Լենինին և Յա. Մ. Սվերդլովին, որի մեջ շարադրված են Չեխոսլովակյան ճակատում ստեղծված իրադրությունը, Սիզրանը թողնելու պատճառները, սովետական օրգաններում և բանակում մի շարք աշխատողների կաղմալուծիչ գործունեությունը։

Մյասնիկյանի զեկուցագիրը Լենինին և Սվերդլովին մի արժեքավոր փաստաթուղթ է Կարմիր Բանակի կազմակերպական շրջանի և նրա հետագա կառուցման կարևոր խնդիրների մասին։ Այդ զեկուցման մեջ Մյասնիկյանն առաջ է քաշում իր նախագիծը Սովետական զինված ուժերի կառուցվածքի, դաշտային և ներքին ծառայության կանոնագրքերի դրույթների, կարգապահության, հրամանատարական կադրերի ընտրության և նրանց իրավունքների, ստորաբաժանումների և զորամասերի կազմի ու ձևի, հրամանների կատարման և այլ խնդիրների մասին։ Մյասնիկյանի մշակած այդ նախագծային դրույթները գրեթե բոլորն էլ հետագայում կիրառվեցին Կարմիր Բանակում։

«Առաջիկայում հրավիրվող Սովետների 5-րդ համագումարը կարևորագույն որոշումներ կընդունի,—գրում է Մյասնիկյանը Լենինին և Սվերդլովին։— Ի միջի այլոց, համագումարի օրակարգում չեմ տեսնում Սովետական բանակի կազմակերպման հարցը։ Այդ պատճառով էլ ես շատ եմ խնդրում, համագումարի օրակարգում մտցնել այդ հարցը...»[1]

Ինչպես հայտնի է սովետների V համագումարը հուլիսի 10-ին որոշում ընդունեց Կարմիր Բանակի մասին։ Երբ Մյասնիկյանը վերադարձավ Արևելքից, Ժողկոմսովետը և Կենտկոմը նրան նորից ուղարկեցին Արևմտյան ճակատ, նորից Բելոռուսիա։

6

1918 թ. ամառը և աշնանը Ա. Մյասնիկյանը գլխավորում էր Բելոռուսիայում գործող Սովետական զինված ուժերը և բելոռուս ժողովուրդի պայքարը գերմանական օկուպանտների դեմ։ 1918 թ. դեկտեմբերին գերմանական օկուպանտները վերջնականապես ջախջախվեցին և վտարվեցին Բելոռուսիայից։

«Բելոռուսիայի աշխատավորները դիմեցին Լենինին և Ստալինին, խնդրելով նրանց ստեղծել Բելոռուսիայի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ 1918 թ. դեկտեմբերին ընկեր Ստալինն ուղիղ գծով հեռախոսի մոտ է կանչում Ռ. Կ. Բ. Պ.-ի Հյուսիս-Արևմտյան մարզերի կոմիտեի նախագահ Ա. Ֆ. Մյասնիկովին և նրան հաղորդում է ՌԿԲՊ Կենտկոմի որոշումը՝ Բելոռուսական ՍՍՌ կազմակերպելու մասին։»[2]

[1] Архив Мясникяна А. Ф., д. 21., л. л. 37—38.
[2] Т. Горбунов, „Советская Белоруссия", стр. 9. Москва, 1944 г.

Հաջորդ օրը տեղի է ունենում Բելոռուսիայի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարը, որտեղ զեկուցումով հանդես եկավ Ա. Մյասնիկյանը։ 1919 թ. հունվարի 1-ին, նոր տարվա օրը, Ա. Մյասնիկյանն ստորագրեց մանիֆեստ, որով Բելոռուսիան հայտարարվեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Բելոռուս ժողովուրդն իր սրտում վառ է պահում հայ ժողովրդի զավակ՝ Ա. Մյասնիկյանի պայծառ անունը։

1919 թ. Մյասնիկյանն աշխատում էր Բելոռուսիայում և իր ջանքերի մի զգալի մասը տրամադրում էր Կարմիր Բանակի շինարարության գործին։ Նա 1919 թ. փետրվարի 24-ին գրեց Բելոռուսիայի և Լիտվայի Կոմունիստական պարտիաների Կենտկոմների թեզիսները ռազմական շինարարության հարցերի մասին։

Հետագայում Ա. Մյասնիկյանը փոխադրվում է պարտիական աշխատանքի Մոսկվայում, որպես Մոսկվայի Կոմիտեի քարտուղար։

1920 թ. փետրվարի 13-ին Մոսկվայում գումարվեց խորհրդակցություն՝ Կարմիր Բանակի ստորին և կենտրոնական ապարատների կառուցվածքի հարցերը քննարկելու համար։ Այդ խորհրդակցության մասնակցում էին ընկ. ընկ. Կ. Վորոշիլովը, Ա. Մյասնիկյանը, Ֆ. Ձերժինսկին, Մենժինսկին և ուրիշները։

Անտանտի երրորդ արշավանքի դեմ մղվող պայքարի օրերին, երբ Սովետական Հայրենիքի վրա հարձակվում էին սպիտակ լեհերն Արևմուտքից և Վրանգելը՝ Ղրիմից, Ա. Մյասնիկյանն աշխատում էր որպես Արևմտյան ռազմաճակատի քաղաքական վարչության պետ։ Այստեղ նա իր ռազմական տաղանդի ամբողջ կարողությունը և պետական, պարտիական գործչի բոլոր ուժերը նվիրում էր Կարմիր Բանակի ռազմիկների կազմակերպման, լուսավորման գործին, Սովետական զորքերի բարոյական-քաղաքական մակարդակը բարձրացնելու և մեր Հայրենիքն Անտանտի նոր արշավանքից պաշտպանելու գործին։

1920 թ. դեկտեմբերին Ս. Կ. Օրջոնիկիձեն պալտիայի Կենտկոմի առաջ հարց է դնում՝ Մ. Մյասնիկյանին Հայաստան աշխատանքի փոխադրելու համար։ 1921 թ. հունվարի 11-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քարտուղարությունը հատուկ որոշում է ընդունում՝ ընկեր Օրջոնիկիձեի խնդիրը բավարարելու և Ա. Ֆ. Մյասնիկյանին Հայաստան գործուղելու մասին։ Ընտրվելով Հայաստանի Ժողկոմսովետի նախագահ, Ա. Մյասնիկյանը շարունակում էր անընդհատ հոգ տանել Սովետական Բանակի ամրապնդման մասին։ Նա 1921 թվին կազմակերպեց Հայկական միավորումներն ու զորամասերը, որոնք մտնում էին Կարմիր Բանակի կազմում, որպես նրա անբաժան մասը։ Մյասնիկյանը Երևանում հիմնեց կարմիր հրամանատարների դպրոցը, որը հետո վերանվանվեց Ա. Մյասնիկյանի անվան կարմիր հրամանատարների դպրոց։ Այդ դպրոցում հավաքագրվեցին Հայաստանի երիտասարդության ներկայացուցիչները, որոնք սովորում էին ռազմական գիտելիքներ և պատրաստվում Հայրենիքի պաշտպանության համար։ Կարելի է հիշել Կարմիր Բանակի փառապանծ գեներալներ՝ Անդրանիկ Ղազարյանին, Նվեր Սաֆարյանին, Տեր-Գասպարյանին և շատ ուրիշներին, որոնք իրենց առաջին

ռազմական կրթությունը և թեորիական կոփումն ստացան Մյասնիկյանի կազմակերպած զինվորական դպրոցում։

Մինչև իր կյանքի վերջին օրն էլ Ա. Մյասնիկյանը հանդիսանում էր ՍՍՌՄ Ռազմա-Ծովային ժողկոմատի Ռազմառևոլուցիոն Խորհրդի անդամը, Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Ռազմառևոլուցիոն Խորհրդի անդամը, և պետական, պարտիական մեծ աշխատանքների հետ միասին, իր ջանքերի մի դդալի մասը նվիրում էր Սովետական զինված ուժերի զարգացման ու հզորացման գործին, որպեսզի մեր Հայրենիքի պաշտպանությունը լինի ապահով ձեռքերում, որպեսզի Սովետական բանակը լինի հզոր և անպարտելի։